

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 3**  
**ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի**  
**2017թ. մարտի 31-ին կայացած նիստի**

Նախագահությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի  
Քարտուղարությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի  
Մասնակցությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի  
անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

**Օրակարգ՝**

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ամփոփիչ քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան

2. Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի հայցորդ Ռոբերտ Ղազարյանի գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան

3. Ընթացիկ հարց: ՀՀ ՊԿՄ իրավագիտության ամբիոնի հայցորդ Անդրանիկ Արամի Միմոնյանի և Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ Ջարուհի Կարենի Մամիկոնյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:

4. Ընթացիկ հարց: Նոր կրթական ծրագրերի քննարկման և հաստատման հարցը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան

5. Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու Կարեն Աշոտի Գալոյանին ԻԳ.00.00-Քաղաքական գիտություններ մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:

Զեկուցող՝ Գիտական քարտուղար Հ.Ստեփանյան

6. Ընթացիկ հարց: Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի 2007 թվականի փետրվարի 27-ի (արձանագրություն թիվ 34) որոշմամբ հաստատված «Մագիստրանտների պրակտիկաների կազմակերպման եվ անցկացման կարգ»-ում լրացում կատարելու հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

**1. Լսեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ամփոփիչ քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան:

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Գ.Գսպոյանը. Ա.Եզեկյանը:

**Որոշեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ամփոփիչ քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունն ընդունել ի գիտություն (հաշվետվությունը կից ներկայացվում է):

**2. Լսեցին՝** Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի հայցորդ Ռոբերտ Ղազարյանի գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան

Զեկուցողը ներկայացրեց, որ Իրավագիտության ամբիոնում 2017թ. մարտի 22-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտության հայցորդ Ռոբերտ Սուրենի Ղազարյանի «Դատական ակտերի հարկադիր կատարումը որպես անձի իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության երաշխիք» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի փոփոխության հարցը՝ գիտական ղեկավար, իրավ.գիտ.դոկտ., պրոֆ. Ա.Երիցյանի մահվան կապակցությամբ և առաջակում են հիմք ընդունելով գրավոր համաձայնությունը՝ Ռոբերտ Ղազարյանի գիտական ղեկավար նշանակել իրավ.գիտ.դոկտ., պրոֆ. Գրիգոր Բաղիրյանին:

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Հ.Ստեփանյանը, Ա.Եզեկյանը:

**Որոշեցին՝** Հիմք ընդունելով գրավոր համաձայնությունը՝ ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ Ռոբերտ Սուրենի Ղազարյանի գիտական ղեկավար նշանակել իրավ.գիտ.դոկտ., պրոֆ. Գրիգոր Գալուստի Բաղիրյանին:

**3. Լսեցին՝** Ընթացիկ հարց: ՀՀ ՊԿԱ իրավագիտության ամբիոնի հայցորդ Անդրանիկ Արամի Սիմոնյանի և Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ Զարուհի Կարենի Մամիկոնյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան:

Զեկուցողը նշեց, որ իրավագիտության ամբիոնում 2017թ. մարտի 22-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է ՀՀ ՊԿԱ իրավագիտության ամբիոնի հայցորդ Անդրանիկ Արամի Սիմոնյանի և Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ Զարուհի Կարենի Մամիկոնյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են գիտական խորհրդին՝

1. Անդրանիկ Արամի Միմոնյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Արդար դատաքննության իրավունքը վարչական արդարադատության համատեքստում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02-Հանրային իրավունք մասնագիտությամբ և հիմք ընդունելով գրավոր համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Գալուստի Բադիրյանին:

2. Զարուհի Կարենի Մամիկոնյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Ընտանիքի, մայրության և մանկության պետական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում (սահմանադրաիրավական հետազոտություն)» վերտառությամբ՝ ԺԲ.00.02-Հանրային իրավունք մասնագիտությամբ և հիմք ընդունելով գրավոր համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հայկի Խաչատրյանին:

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Ա.Եզեկյանը, Հ.Ստեփանյանը:

### **Որոշեցին՝**

1. Անդրանիկ Արամի Միմոնյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Արդար դատաքննության իրավունքը վարչական արդարադատության համատեքստում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02-Հանրային իրավունք մասնագիտությամբ և հիմք ընդունելով գրավոր համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Գալուստի Բադիրյանին:

2. Զարուհի Կարենի Մամիկոնյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Ընտանիքի, մայրության և մանկության պետական պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում (սահմանադրաիրավական հետազոտություն)» վերտառությամբ՝ ԺԲ.00.02-Հանրային իրավունք մասնագիտությամբ և հիմք ընդունելով գրավոր համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հայկի Խաչատրյանին:

**4. Լսեցին՝** Ընթացիկ հարց: «Ապահովագրական գործ», «Զբոսաշրջության կառավարում», «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում» «Քաղաքական ժուռնալիստիկա և PR տեխնոլոգիաներ» կրթական ծրագրերի ուսումնական պլանների հաստատման հարցը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի 2016թ. դեկտեմբերի 28-ի գիտական խորհրդում որոշմամբ միջնորդել ենք ՀՀ կրթության և գիտության նախարարին՝ «Ապահովագրություն եվ ռիսկերի կառավարում», «Զբոսաշրջության կազմակերպում եվ կառավարում», «Պետական կառավարում եվ տեղական ինքնակառավարում» մագիստրոսի կառավարման որակավորում և «Քաղաքական ժուռնալիստիկա եվ PR տեխնոլոգիաներ» քաղաքագետի որակավորում շնորհող կրթական ծրագրերը ներառել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերի ցանկում:

Արդյունքում՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 07 մարտի 2017թ. -ի N 236-Ս/2 հրամանը, մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման լիցենզիա ստանալու համար

«Լիցենզավորման մասին» և «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան նոր մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզիա ստանալու համար հաստատել հետևյալ մասնագիտական կրթական ծրագրերի առկա և հեռակա ուսուցման ուսումնական պլանները՝

1. 041301.00.7 «Կառավարում» մասնագիտության «041301.03.7-Պետական կառավարում եվ տեղական ինքնակառավարում» և «041301.11.7-Զբոսաշրջության կառավարում»,
2. 031201.00.7 «Քաղաքագիտություն» մասնագիտության «031201.12.7-Քաղաքական ժողովալիստիկա եվ PR տեխնոլոգիաներ»,
3. 041201.00.7 «Ֆինանսներ» մասնագիտության «041201.02.7-Ապահովագրական գործ»:

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Թ.Խեչոյանը, Գ.Չատինյանը, Գ.Գապոյանը, Մ.Մարգարյանը:

**Որոշեցին՝** Հաստատել հետևյալ մասնագիտական կրթական ծրագրերի առկա և հեռակա ուսուցման ուսումնական պլանները՝

1. 041301.00.7 «Կառավարում» մասնագիտության «041301.03.7-Պետական կառավարում եվ տեղական ինքնակառավարում» և «041301.11.7-Զբոսաշրջության կառավարում»,
2. 031201.00.7 «Քաղաքագիտություն» մասնագիտության «031201.12.7-Քաղաքական ժողովալիստիկա եվ PR տեխնոլոգիաներ»,
3. 041201.00.7 «Ֆինանսներ» մասնագիտության «041201.02.7-Ապահովագրական գործ»:  
(ուսումնական պլանները կից ներկայացվում են):

**5. Լսեցին՝** Ընթացիկ հարց: Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու Կարեն Աշոտի Գալոյանին ԻԳ.00.00-Քաղաքական գիտություններ մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյան:

Հ.Ստեփանյանը նշեց, որ քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու Կարեն Աշոտի Գալոյանի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ մասի Բ ենթակետի պահանջներին:

Կ.Գալոյանը 2012թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: Թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո հրատարակել է 7 գիտական հոդված (1-ը համահեղինակությամբ) և 1 ուսումնամեթոդական ուղեցույց: Կ. Գալոյանը 2012 թվականի հունվարից 2014թ. ապրիլը աշխատել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնում որպես ասիստենտ, իսկ 2014թվականից առ այսօր դասավանդում է «Բյուրոկրատիայի տեսություն», «Աշխարհաքաղաքական հիմնախնդիրները տեղեկատվական դարաշրջանում» և «Թվային ժողովրդավարություն» առարկաները՝ ժամավճարային հիմունքներով:

**Արտահայտվեցին՝** Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ Մ.Մարգարյանը: Նա նշեց, որ Կարեն Գալոյանը որպես դասախոս ակտիվորեն մասնակցում է ոչ միայն ամբիոնում, այլև ակադեմիայում իրականացվող գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներին, շատ սիրված է ուսանողների կողմից:

Այնուհետև ակադեմիայի գիտական խորհրդի նիստի նախագահ Ա. Լոքյանը մատնանշեց, որ Կ.Գալոյանն իր աշխատանքն իրականացնում է բարեխղճորեն և արժանի է հայցվող գիտական կոչմանը, ուստի առաջարկեց իրականացնել գաղտնի քվեարկություն՝ հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմով՝

1. Խաչատուր Բեգիրջյան՝ նախագահ
2. Ռուբեն Աղուզումցյան՝ անդամ
3. Անի Սարգսյան՝ անդամ

Բաց քվեարկությամբ հաստատվեց նշված կազմը:

Գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Խ.Բեգիրջյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները: Քվեարկության արդյունքներն են՝ գիտական խորհրդի 26 անդամներից նիստին մասնակցել են 21-ը, որից կողմ՝ 21, դեմ՝ 0, անվավեր՝ 0 (կից ներկայացվում է հաշվիչ հանձնաժողովի նիստի № 1 արձանագրությունը):

Այնուհետև բաց քվեարկությամբ հաստատվեց գաղտնի քվեարկության արդյունքները: Քվեարկությունն անցավ միաձայն:

### **Որոշեցին՝**

1. Հաշվի առնելով, որ քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու Կարեն Գալոյանի կատարած գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքները համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ»-ի 5-րդ մասի Բ ենթակետի պահանջներին՝ Կարեն Աշոտի Գալոյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ԻԳ.00.00 «Քաղաքական գիտություններ» մասնագիտությամբ:

2. Միջնորդել ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովին՝ հաստատելու սույն որոշումը:

**6. Լսեցին՝** Ընթացիկ հարց: Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի 2007 թվականի փետրվարի 27-ի (արձանագրություն թիվ 34) որոշմամբ հաստատված «Սագիստրանտների պրակտիկաների կազմակերպման եվ անցկացման կարգ»-ում լրացում կատարելու հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

Զեկուցող Ա.Լոքյանը ներկայացրեց, որ անհրաժեշտ է «Սագիստրանտների պրակտիկաների կազմակերպման և անցկացման կարգում» կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ նոր՝ 36-րդ կետով «36. Սույն կարգի 35-րդ կետով սահմանված դրույթները չեն

տարածվում կառավարչական պրակտիկան ձախողած և պրակտիկայի պաշտպանության հաշվետվությունից անբավարար գնահատական ստացած սովորողների վրա: Կառավարչական պրակտիկան ձախողած և պրակտիկայի պաշտպանության հաշվետվությունից անբավարար գնահատական ստացած սովորողները կարող են վճարովի հիմունքներով ևս մեկ անգամ անցնել կառավարչական պրակտիկան»:

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Ա.Եզեկյանը, Գ.Հովհաննիսյանը:

**Որոշեցին՝** Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի 2007 թվականի փետրվարի 27-ի (արձանագրություն թիվ 34) որոշմամբ հաստատված «Մագիստրանտների պրակտիկաների կազմակերպման և անցկացման կարգում» կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ նոր՝ 36-րդ կետով «36. Մույն կարգի 35-րդ կետով սահմանված դրույթները չեն տարածվում կառավարչական պրակտիկան ձախողած և պրակտիկայի պաշտպանության հաշվետվությունից անբավարար գնահատական ստացած սովորողների վրա: Կառավարչական պրակտիկան ձախողած և պրակտիկայի պաշտպանության հաշվետվությունից անբավարար գնահատական ստացած սովորողները կարող են վճարովի հիմունքներով ևս մեկ անգամ անցնել կառավարչական պրակտիկան»:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան  
31 մարտի 2017թ.

Կ.Տ.